ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՒՅԺԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (16108) ՇԱԲԱԹ, 16 ՄԱՐՏԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «...ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՆՁԿԱԾՆԵՆՔ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մարտի 14-ին հանդիպում ունեցավ երկրի տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Շուրջ չորսուկես ժամ տեւած հանդիպմանը վարչապետը խոսեց տարածաշրջանների զարգացման հետ կապված ծրագրերի, առաջիկայում նախատեսված սահմանադրական փոփոխությունների, ընդհանրապես երկրի առջեւ ծառացած հիմնախնդիրների վերաբերյալ:

«ՄԵՆՔ ՔՆՆԱՐԿԵՑԻՆՔ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ»

Պատասխանելով Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի զարգացման եւ Հայաստանի հետ հարաբերությունների հեռանկարների մասին «Հարավային Դարպասի» լրագրողի Թամար Թոքածեի հարցին, Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ հանդես է գալիս Թբիլիսիում վրաց-հայկական ընդգրկուն գործարար համաժողով կազմակերպելու օգտին: Նրա խոսքերով, այդ հարցը քննարկել է խորհրդարանական մեծամասնության պատգամավորների եւ իր քաղաքական թիմի անդամ հայազգի պատգամավոր Ռուսլան Պողոսյանի հետ: «Մենք ցանկանում ենք այստեղ հրավիրել հայ եւ վրացի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին այցով գտնվեց Բրյուսելում:

Ինչպես հաղորդել են նախագահի վարչակազմից, Սաակաշվիլին, Եվրոպայի ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) նախագահ Վիլֆրեդ Մարտենսի անձնական հրավերով, մասնակցեց այդ քաղաքական միավորման գագաթաժողովին:

Միջոցառմանը ներկա եղան եվրոպական քաղաքական ղեկավարներ, պետությունների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Իսպանիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Հայաստանի, Մոլդովայի եւ այլ երկրների առաջին դեմքերը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:

Մարտի 8-ին, այցի շրջանակներում Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ:

Հանդիպմանը Հայաստանի նախագահին ընդգծեց, որ Հայաստանը հետաքրքրված է Վրաստանի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՊԱՏՐԱՍՏ Է

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԿԼԻՆԵՆ ՄԱՐՏԻ 20-Ի

Սահմանադրական փոփոխությունների համընդհանուր քննարկման հանձնաժողովն արդեն ավարտել է փաստաթղթի վերամշակման աշխատանքը:

Համաձայն օրինանախագծի, Սահմանադրությունից հանվում են այն երկու հոդվածները, որոնք երկրի նախագահին արգելում են ընտրություններից հետո վեց ամսվա ընթացքում եւ մինչեւ նախագահի լիազորությունների ժամկետի սպառումից վեց ամիս շուտ ցրել նորընտիր խորհրդարանը: Փոփոխությունները նախագահին հնարավորություն է ընձեռում ցանկացած

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՍՆԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին անդրանիկ պաշտոնական այցով գտնվում է ԱՄՆ-ում:

Նա արդեն հանդիպումներ է անցկացրել ԱՄՆ-ի պետդեպարտամենտում, Կոնգրեսում եւ Սենատում: Խոսնակը նաեւ մասնակցել է մի քանի կլոր սեղանների, որոնց ընթացքում հասարակայնությանը եւ փորձագետներին ծանոթացրել է Վրաստանի նոր կառավարության մոտեցումներին: Դավիթ Ուսուփաշվիլին Պենտագոնում կայացած հանդիպմանը քննարկել է ԱՄՆ-ի եւ Վրաս-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարտի 12-ին Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի դեսպան Հովհաննես Մանուկյանի հետ:

Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առողջապահության բնագավառում համագործակցության եւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող մի շարք խնդիրներ: Առողջապահության նա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻՆԵԼԸ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ՈՐ ՆՐԱՆՔ ՊԵՏՔ Է ՄԵԶ ԽԵԼՔ ՍՈՎՈՐԵՑՆԵՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Եվրոպայի խորհրդի խորհրդարանի մի շարք պատգամավորներ նամակ են առաքել Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն, որտեղ քննադատության են ենթարկել նրա գլխավորած կառավարության գործունեությունն ու իրենց աջակցությունը հայտնել Միխեիլ Սաակաշվիլուն:

Բիձինա Իվանիշվիլին հայտնեց, որ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու՝ ավելի վաղ հրապարակված, եվրախորհրդարանականներին ուղղված հայտարարությունը «արտահայտում է նաեւ նրա դիրքորոշումը»: «Ես ինքս նույնպես իմ հայտարարությունն եմ նախապատրաստում Եվրոպական խորհրդարանի պատգամավորական խմբի այդ նամակի կապակցությամբ,- ասեց նա, - այն ավելի կտրուկ կլինի, քան Ուսուփաշվիլու հայտարարությունը»:

«Ես հարգում եմ եվրոպացիներին, սակայն եվրոպացի լինելը չի նշանակում, որ նրանք բոլորը ժողովրդավարներ են եւ նրանք բոլորը մեզ պետք է խելք սովորեցնեն»,- նշել է Վրաստանի վարչապետը:

Վրաստանի վարչապետը նամակում եվրոպացիներին պատմում է Վրաստանի Սահմանադրության հետ կապված իրավիճակի մասին եւ նշում, որ երկրի նոր կառավարությունը պատրաստվում է կառուցել նորմալ երկիր:

«Վրացական հասարակությունը, որը միանշանակորեն Արեւմուտքին երախտագետ է օգնության եւ աջակցության համար, ունի հարցեր քաղաքական ուժերի այն ներկայացուցիչներին, ովքեր ողջունում են բռնության, արժանապատվության քամահրման, նվաստացման վրա հիմնված ժողովրդավարությու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՏԻԿԱՆ

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՌԱՋԻՆԸ՝ ՀՌՈՄԻ 266-ՐԴ ՊԱՊ



Հռոմի 266-րդ Պապ է ընտրվել Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս-Այրեսի արքեպիսկոպոս 76-ամյա Խորխե Մարիո Բերգոլիոն: Հռոմի նոր Պապն ընտրել է Ֆրանցիսկոս Առաջին անունը: Հռոմի նոր Պապ ընտրված Ֆրանցիսկոսի գահակալման արարողությունը նշանակված է մարտի 19-ին:

Ֆրանցիսկոս Առաջինը ծնվել է 1936թ. դեկտեմբերի 17-ին, Բուենոս Այրեսում, իտալացի ներգաղթյալների ընտանիքում:

1969թ. Բերգոլիոն ձեռնադրվել է քահանա: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1992թ., իսկ 1997թ. նշանակվել է Բուենոս Այրեսի արքեպիսկոպոսի կոադյուտոր, ապա՝ արքեպիսկոպոս: Հռոմի Պապ Հովհաննես Պողոս Երկրորդը 2001 թվականին Խորխե Մարիո Բերգոլիոյին կարդինալ է օծել:

Վրաստանում ապրող շուրջ 50 հազար կաթոլիկները, կաթոլիկ աշխարհի ավելի քան 1,2 միլիարդ հավատացյալների հետ միասին, անհամբեր սպասում էին նոր Պապի անվան հայտարարմանը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՊԱՏՐԱՍՏ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժամանակ, այդ թվում՝ նորընտիր խորհրդարանի աշխատանքի առաջին վեց ամիսների եւ մինչեւ նախագահի լիազորությունների սպառման ժամկետի ավարտը, վեց ամիս շուտ, ցրել խորհրդարանը եւ նշանակել արտահերթ ընտրություններ: Միաժամանակ օրինանախագիծը սահմանափակում է առանց խորհրդարանի համաձայնության, կառավարությունը ցրելու եւ այն ձեւավորելու նախագահի լիազորությունները:

Հիշեցնենք, որ գործող սահմանադրության համաձայն, եթե կառավարության կազմը եւ նրա ծրագիրը երեք անգամ անընդմեջ արժանանում է խորհրդարանի անվստահությանը, ապա նախագահը հինգ օրվա ընթացքում խորհրդարանին է ներկայացնում նոր վկարչապետի թեկնածությունը կամ վարչապետին նշանակում է առանց խորհրդարանի համաձայնության: Վարչապետն իր հերթին, հնգօրյա ժամկետում նախագահի համաձայնությամբ նշանակում է նախարարներին: Նման իրավիճակում նախագահը ցրում է խորհրդարանը եւ նշանակում նոր ընտրություններ:

Սահմանադրական փոփոխությունների նախագծի համաձայն, եթե կառավարությունը երեք անգամ անընդմեջ չի ստանում խորհրդարանի վստահության քվեն, ապա նախագահը եռօրյա ժամկետում ցրում է խորհրդարանը եւ նշանակում արտահերթ ընտրություններ, ընդ որում՝ մինչեւ նոր կառավարության նշանակումը, կառավարության հին կազմը շարունակում է կատարել իր գործառույթները:

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, մարտի 20-ից Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ կլինի սահմանադրական փոփոխությունների քննարկմանն ու ընդունմանը, իսկ մինչ այդ կանցկացվեն կոմիտեական ունկնդրումներ:

Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Գիորգի Բարամիձեն հայտարարեց, որ փոքրամասնությունը պատրաստ է պաշտպանել սահմանադրական փոփոխությունները, եթե դադարեցվեն ընդդիմության քաղաքական հալածանքները:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԵՎՐՈՊԱՅԻ ԼԻՆԵԼԸ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ, ՈՐ ՆՐԱՆՔ ՊԵՏՔ Է ՄԵՋ ԽԵԼՔ ՍՈՎՈՐԵՑՆԵՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը եւ այսօր սուր կերպով քննադատում են Վրաստանի նոր կառավարությանը, որը ձեռնամուխ է եղել իրական ժողովրդավարական պետության կառուցմանը»,- գրում է Իվանիշվիլին:

«Եվրոպական արժեքները՝ անձնական ազատությունը, ուրիշի արժանապատվության հարգումը, պետական կառավարմանը մասնակցությունը, կառավարության հաշվետու լինելը, օրենքի, մարդու իրավունքների գերակայության թափանցիկությունը, փոքրամասնության շահերի պաշտպանությունը, այս ամենը՝ հենց դեպի Արեւմուտք վրաց ժողովրդի ձգտման պատճառն է: Եվրոպական արժեքների վրա հիմնված այդպիսի մանդատ Վրաստանի բնակչությունը 2012 թվականի ընտրությունների ժամանակ շնորհեց «Վրացական երազանք» քաղաքական կոալիցիային»,- նշում է Իվանիշվիլին:

Վրաստանի վարչապետն ընդգծում է, որ ինքը հարգում է Եվրոպայի ժողովրդական կուսակցությանը՝ որպես Եվրոպայի ամենամեծ, ազդեցիկ եւ հաջողակ քաղաքական ուժի եւ նրան կոչ արեց ուշադրություն նվիրել այն փաստերին, որոնք հնարավոր է, հայտնի չեն եղել շատերին:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին՝ իր նամակում Եվրոպական խորհրդարանի պատգամավորներին կոչ էր արել «զերծ մնալ Վրաստանի կառավարությանն ուղղված կեղծ հայտարարություններից»:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հետ հարաբերությունների զարգացմամբ, որին զգալիորեն նպաստում են տարբեր մակարդակի փոխայցելությունները:

Վկայակոչելով Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու կառավարության մոտեցումներն ու որդեգրած քաղաքականությունը՝ Իրակլի Ալասանիան շեշտեց, որ Վրաստանի առաջնահերթությունների մեջ է եղբայրական Հայաստանի հետ ռազմավարական բնույթի հարաբերություններ զարգացնելը:

Վրաստանն անհանգստացած չէ Հայաստանում ռուսական ռազմաբազայի առկայությամբ: Այդ մասին մարտի 7-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան: «Համոզված ենք՝ հայկական կողմը թույլ չի տա, որ Հայաստանում առկա ռազմաբազաներն օգտագործվեն՝ ի վնաս Վրաստանի շահերին»,- նշեց նա:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խարարը, մասնավորապես, ընդգծեց վրացական կողմի հետաքրքրվածությունը հեռաբուժության բնագավառում Հայաստանի ունեցած փորձում: Միաժամանակ, Հովհաննես Մանուկյանը հայկական կողմի համար կարեւոր համարեց Վրաստանի փորձի ուսումնասիրումը ապահովագրական բժշկության տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում կողմերը միասնական կարծիք արձանագրեցին երկու պետությունների միջեւ առողջապահության բնագավառում առկա համագործակցության առավել ընդլայնման, վրաց եւ հայ բժիշկների փորձի փոխանակման անհրաժեշտության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

Մարտի 7-ին Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանն ընդունեց Վրաստանի ասորիների միջազգային կոնգրեսի ղեկավար Դավիթ Ադամովին:

Հանդիպմանը Հովհաննես Մանուկյանը գոհունակություն արտահայտեց Վրաստանի ասորական համայնքի՝ հայ ժողովրդի եւ Վրաստանի հայ համայնքի նկատմամբ ջերմ եւ բարեկամական վերաբերմունքի կապակցությամբ:

Հանդիպման ավարտին Հայաստանի դեսպանը շնորհակալություն հայտնեց Վրաստանի ասորիների միջազգային կոնգրեսի ղեկավարին այցելության համար՝ կարեւորելով համայնքային կառույցների միջեւ փոխգործակցության արդյունավետությունը ազգային, մշակութային ինքնության պահպանման եւ ինքնադրսեւորման գործում:



ԱԴՐԲԵՋԱՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐ ԲԱՔՎՈՒՄ

Բաքվի Շատրվանների հրապարակում «Վերջ զինվորների մահերին» կարգախոսով մարտի 10-ին տեղի է ունեցել բողոքի ակցիա: Այն առնչվում էր այս տարվա սկզբից մինչ այժմ ադրբեջանական բանակում 17 զինծառայողների մահանալու եւ 11-ի վիրավորվելու կամ տարբեր աստիճանի վնասվածքներ ստանալուն: Զինվորների մեծամասնությունը մահացել է բանակում առկա «դեդովշինայի», ոչ կանոնադրական հարաբերությունների, ծառայակիցների կողմից դաժան ծեծի ու սպանությունների պատճառով:

Բաքվում տեղի ունեցած բողոքի ակցիային 3 հազարից ավելի մարդ է մասնակցել: Ոստիկանությունը, որը դաժանորեն ցրել է ակցիան՝ օգտագործելով ջրաշիթեր կրակող սարքեր, ձերբակալել է ակցիայի 60-ից ավելի մասնակիցների: Նրանցից 12-ի նկատմամբ դատական գործ է հարուցվել:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մարտի 5-ին վախճանվեց Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը: Երկրի իշխանությունների որոշմամբ Ուգո Չավեսի մարմինը կզմռսվի եւ կտեղադրվի մայրաքաղաքային հեղափոխության թանգարանում:

Ինչ վերաբերում է նոր նախագահի ընտրություններին, ապա այն կանցկացվի ապրիլի 14-ին: Այսօրվա դրությամբ որպես նախագահի թեկնածուներ գրանցվել են Վենեսուելայի ներկայիս փոխնախագահ, նախագահի պաշտոնակատար Նիկոլաս Մադուրոն եւ ընդդիմադիր քաղաքական գործիչ Էնրիկե Կապրիլեսը:

ՉԻՆԱՍՏԱՆ

ՍԻ ՑԶԻՆՊԻՆԸ՝ ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Սի Ցզինպինը պաշտոնապես ընտրվել է Չինաստանի նախագահի պաշտոնում:

Սի Ցզինպինի թեկնածությանը հավանություն են տվել Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի (խորհրդարանի) պատգամավորները, որի նստաշրջանն ընթանում է Պեկինում: Սի Ցզինպինն ընտրվել է նաեւ ՉԺՀ-ի Կենտրոնական զինվորական խորհրդի՝ երկրի բարձրագույն զինվորական մարմնի նախագահ:

2012 թվականի նոյեմբերից Սի Ցզինպինն զբաղեցնում է Չինաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնը: Կուսակցության ղեկավարի եւ ՉԺՀ-ի նախագահի պաշտոնում Սի Ցզինպինը փոխարինել է Հու Ցզինտաոյին՝ ղեկավարների այսպես կոչված «հինգերորդ սերնդի» իշխանության գլուխ անցնելու շրջանակներում, ղեկավարներ, որոնք երկիրը կկառավարեն առաջիկա տասը տարվա ընթացքում:

Իսկ ՉԺՀ-ի Պետխորհրդի վարչապետի պաշտոնում հաստատվել է Չինաստանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի մշտական կոմիտեի անդամ Լի Կեցյանի թեկնածությունը:

ՎԱՏԻԿԱՆ

ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ԱՌԱՋԻՆԸ՝ ՀՌՈՄԻ 266-ՐԴ ՊԱՊ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թբիլիսիի սուրբ Պողոս եւ սուրբ Պետրոս կաթոլիկ եկեղեցու հավատացյալ էդուարդ Զախարյանը խոստովանեց, որ Բենեդիկտոս XVI Պապի գահակալման հրաժարականը, նրան շատ էր վրդովեցրել, չէ՞ որ Զատկի լուսավոր տոնը սարերի ետեւում չէ:

«Նյարդայնացած էի, մտահոգ, անընդհատ մտածում էի, թե ի՞նչ ընթացք կունենա այս ամենը, ինչպե՞ս կպսակվի. ուշադիր հետեւում էի Վատիկանից եկող յուրաքանչյուր տեղեկատվությանը: Ինձ թվում է, այս ընտրությունը իր դրական ազդեցությունը կունենա նաեւ մեր տարածաշրջանում»:

Կաթոլիկ եկեղեցու հավատացյալներից Նինա Մելիք-Մարութովայի համար կարեւորն էր տեսնել նոր հովվապետին եւ լսել նրա ձայնը: Նինան ասում է, որ նորընտիր Պապի հանրությանն ուղղված առաջին խոսքն իր մոտ առաջացրեց նույն հիացմունքը, ինչ Վատիկանի հրապարակում հավաքված հազարավոր մարդկանց մոտ:

«Ակնկալում եմ, որ նա կշարունակի Հովհաննես Պողոս Երկրորդ Պապի քաղաքականությունը: Երբ Ֆրանցիսկոս Պապը դուրս եկավ ժողովրդի առաջ, անմիջապես գրավեց ինձ իր պարզությամբ, հավատացյալներին նա այնքա՜ն գեղեցիկ ու հասարակ էր ողջունում. հոգիս ուրախությամբ էր լցվել»:

«Սրբազան քահանայապետը մեծ դերակատարություն ունի Կաթողիկե եկեղեցու համար,- ասում է Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հեշտիա գյուղի Սուրբ Աստվածածին կաթողիկե եկեղեցու ժողովրդապետ Տեր Անտոն քահանա Անտոնյանը:- Նորընտիր Պապի մասին մեծ գոհունակությամբ են խոսում իր երկրի հավատացյալները, ինչը մեծ հույս ու լույս է բոլորիս, կաթոլիկ ողջ աշխարհի համար: Մենք մեր հերթին նույնպես, Սուրբ Հոգուն կաղոթենք Ֆրանցիսկոս Պապի սուրբ գործերի համար, որպեսզի նա կարողանա անսխալական ղեկավարել եկեղեցին, ինչը շատ կարեւոր է Տիեզերական մեր եկեղեցու համար: Կարծում եմ, կոնկլավը ճիշտ որոշում կայացրեց եւ առաջնորդվեց Սուրբ Հոգու ներշնչումով, դա բացահայտ երեւաց նաեւ Ֆրանցիսկոս Պապի անթաքույց բարի հայացքից ու աչքերից»:

Նրանց ներդումը վրաց մշակույթի ու հասարակական գործունեության մեջ անչափ մեծ է: Նոր Պապի ընտրությամբ վրացի կաթոլիկների մոտ նոր հույս է ծնվել, որ մի օր Ֆրանցիսկոսը կայցելի նաեւ Թբիլիսի, ինչպես դա արեց Հովհաննես Պողոս Երկրորդը՝ 1999 թվականի նոյեմբերի 2-ին»:

Նոր քահանայապետը պապական աթոռին ընտրված առաջին ճիզվիտն է եւ Լատինական Ամերիկայից առաջին հոգեւորականը:

Պատրաստեց՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՍՆԱԿԸ ԱՄՆ-ՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տանի միջեւ ռազմական համագործակցության հարցերը:

ԱՄՆ-ի պետդեպարտամենտում կայացած հանդիպմանը Ուսուփաշվիլին խոսել է կատարված սահմանադրական ուղղումների մասին: Հանդիպման գլխավոր թեմաներն են եղել նաեւ ռազմավարական համագործակցությունը, ՆԱՏՕ-ին ինտեգրացումը եւ երկրի ժողովրդավարացումը:

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, խորհրդարանի արտաքին կապերի կոմիտեի նախագահ Թեդո Ջափարիձեն, «Վրացական երազանք-Ազատ ժողովրդավարներ» խմբակցության ղեկավար Իրակլի Չիքովանին Միացյալ Նահանգներ այցի շրջանակներում եղան Ջորջ Վաշինգտոնի համալսարանում եւ մասնակցեցին կլոր սեղանի՝ նվիրված Վրաստանի հարցերին:

«Մեր գործընկերներին առավել հետաքրքրեց, թե ինչպիսին է ժողովրդավարության ապագան Վրաստանում, ինչպես կանցկացվեն ընտրությունները, ինչպես կլրանա նախագահի ժամկետը եւ այլն: Այս բոլոր հարցերին մենք տվեցինք սպառիչ պատասխաններ, հույս հայտնելով, որ այսպիսի հանդիպումները կշարունակվեն: Նրանցից ոմանք մոտ ժամանակներս կժամանեն Վրաստան, եւ մենք կունենանք հանդիպումներ: Ուրախալի է, որ, բացի պաշտոնական շրջանի ներկայացուցիչներից, մենք հնարավորություն ունեցանք հանդիպելու նաեւ փորձագետների եւ համալսարանական շրջանների հետ»,- հայտարարել է Դավիթ Ուսուփաշվիլին:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՆԱՁԵՎ՝ ԵՐԿՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարտի 7-ին Վրաստանի խորհրդարանը 96 ձայնով ընդունեց բանաձեւ, որտեղ կանխագծված են Վրաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները:

19 կետից բաղկացած բանաձեւը առանձին փոփոխություններից հետո, հավանության արժանացավ նաեւ խորհրդարանական փոքրամասնության կողմից:

Բանաձեւը հիմնված է այն նույն փաստաթղթի նախագծի վրա, որը նախօրոք ապախմբակցային համաձայնության ձեւաչափով ներկայացվել է «Վրացական երազանքի» կողմից, թեպետ դրա վերջնական տարբերակում իր արտացոլումն է գտել նաեւ «Ազգային շարժման» առաջարկությունը:

Համաձայն բանաձեւի, երկրի արտաքին քաղաքական առաջնահերթությունը եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրումն է: Բանաձեւում առանձին կետ է հատկացված Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցին: Որպես արտաքին քաղաքական առաջնահերթություն, խորհրդարանի կողմից ընդունված բանաձեւում ընդգծված է հարեւան երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ երկկողմ քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների կարեւորությունը: Ընդ որում, ինչպես նշված է բանաձեւում, Վրաստանը պետք է վերածվի փոխշահավետ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների եւ գործարար հնարավորությունների իրացման տարածքի:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Տարածքային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Դավիթ Նարմանիան, իր տեղակալ Շոթա Մուրղուլիայի եւ Մունիցիպալ զարգացման հիմնադրամի տնօրեն էլգուջա Խոնկրիշվիլու հետ, աշխատանքային այցով գտնվեց ԱՄՆ-ում:

Այցի շրջանակներում, պատվիրակությունը տարբեր ձեւաչափի հանդիպումներ ունեցավ Համաշխարհային բանկի կենտրոնական գրասենյակում: Հանդիպումների ընթացքում սահմանվեցին Վրաստանի հետ Համաշխարհային բանկի գալիք համագործակցության ուղղությունները:

Դավիթ Նարմանիան Համաշխարհային բանկի ներկայացուցիչներին ծանոթացրեց իր գերատեսչության աշխատանքին եւ ապակենտրոնացման ռազմավարությանը:

Հատուկ ուշադրություն նվիրվեց տեղական ինքնավարության բարեփոխմանը, ապակենտրոնացմանը եւ այդ ուղղությամբ Համաշխարհային բանկի աջակցությանը:

Կողմերը նաեւ քննարկեցին Համաշխարհային բանկի հաշվետվությունը Կախեթիում տեղ գտած տարերային աղետի հետեւանքների մասին: Հաշվետվության հիման վրա պլանավորվում է նախապատրաստել տարերային աղետների կառավարման հատուկ ռազմավարություն:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Եվրամիությունը շարունակում է ֆինանսական օգնությունը Վրաստանին:

Ինչպես հաղորդել են եվրաինտեգրման հարցերով պետնախարարի աշխատակազմից, Վրաստանին ցույց տրվող ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում Եվրամիությունը հատկացրել է եւս 40 միլիոն դոլար:

Ֆինանսական համաձայնագիրը ստորագրել են Վրաստանի եվրաինտեգրման հարցերով պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին եւ Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության ղեկավար Ֆիլիպ Դիմիտրովը:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՆ ԱՌԱՔՎԵԼ ԳԻՆՈՒ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Վրաստանը սկսել է «Ռոսպոտրեբնադզոր» ուղարկել գինու եւ հանքային ջրի նմուշներ՝ դրանց համար գրանցում ստանալու նպատակով:

Ըստ վրացական գինու ազգային գործակալության հաղորդած տեղեկատվության՝ նախնական ուղարկվել է գինեգործական 4 կազմակերպության արտադրանք:

Ռուսաստանում մթերքի ու խմիչքի որակական հատկանիշերի հետազոտմամբ զբաղվող «Ռոսպոտրեբնադզոր» ընկերության մասնագետների առաջին խումբն արդեն փետրվարի 25-ից մարտի 1-ն ընկած ժամանակահատվածում նախապես ուսումնասիրել է տվյալ գինեգործական կազմակերպությունների գործունեությունը հենց Վրաստանում: Միայն դրանից հետո կազմակերպության ղեկավարությունը հայտարարել է, որ նրանք կարող են իրենց արտադրանքից նմուշներ ներկայացնել փորձաքննության:

Ավելի վաղ, կապված ռուս-վրացական հարաբերությունների վատթարացման եւ խզման հետ, վրացական գինիների արտահանումը Ռուսաստան կտրուկ նվազել էր, ինչը հարվածել էր Վրաստանում գինեգործության ոլորտին: Վրաստանի վարչապետ դառնալուց հետո Բիձինա Իվանիշվիլին քայլեր է ձեռնարկում՝ վերականգնելու ռուս-վրացական խզված հարաբերությունները:

ՀԱՄԱՆԵՐՈՒՄ

ԱՋԱՏ Է ԱՐՁԱԿՎԵԼ ԱՎԵԼԻ ՔԱՆ 8000 ԲԱՆՏԱՐԿՅԱԼ

Վրաստանում համաներման մասին օրենքի հիման վրա 2013թ. մարտի 9-ի դրությամբ բանտերից ազատ է արձակվել 8.503 բանտարկյալ:

Այս մասին տեղեկացրել է Վրաստանի պատիժների իրականացման նախարարության մամլո ծառայությունը:

Նախարարությունից հայտնել են, որ փետրվարին ազատ է արձակվել 7.699 բանտարկյալ, որոնցից 7.431-ը տղամարդ է, 238-ը՝ կին:

Վրաստանի խորհրդարանը համաներման մասին օրենքն ընդունել է 2012թ. դեկտեմբերի 21-ին: Դեկտեմբերի 27-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին վետո էր դրել «Համաներման մասին» օրենքի այն մասի վրա, որը վերաբերում է քաղբանտարկյալներին եւ այն անձանց, ովքեր հանցագործություն են կատարել անչափահասների դեմ: Սակայն դեկտեմբերի 28-ին խորհրդարանը հաղթահարել էր նախագահի վետոն, ինչից հետո խորհրդարանի նախագահն ստորագրել էր օրենքը: Օրենքն ուժի մեջ է մտել 2013թ. հունվարի 13-ից:



ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԿԱՅՑԵԼԻ ԱԴՐԲԵՋԱՆ

Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան մարտի 18-ին կայցելի Ադրբեջան:

«Ես Ադրբեջանի իմ պաշտոնակցի հետ արդեն հանդիպել եմ Բրյուսելում ՆԱՏՕ-ի միջոցառման ժամանակ: Մենք քննարկել ենք մի քանի հարց: Համոզված եմ, որ մեր պատմական, ռազմավարական համագործակցությունն ու եղբայրությունը է՛լ ավելի կխորանա: Ես ուրախ եմ, որ ինձ հրավիրել են այցելել Ադրբեջան: Ես սիրում եմ ադրբեջանական ժողովրդին, Բաքուն եւ Ադրբեջանը»,- ասել է Ալասանիան:

Նախարարի խոսքով՝ այս տարի ռազմական ոլորտում Ադրբեջանի հետ համատեղ կիրագործվեն մի քանի նախագծեր:

Հիշեցնենք, որ Վրաստանի պաշտպանության նախարարը մարտի 7-8-ը այցով գտնվել է Հայաստանում:

ԱՄՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է

Վաշինգտոնը մտադիր է Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի օգնությունը Հարավային Կովկասի երկրներին կրճատել 24 տոկոսով: Նոր բյուջեի նախագծով ենթադրվում է կրճատել օգնությունը քաղաքական, տնտեսական ոլորտների, ինչպես նաեւ առողջության բնագավառի ծրագրերի համար:

Ամերիկյան բյուջեի նախագծի համաձայն, Վրաստանը կպահպանի այնպիսի երկրի կարգավիճակը տարածաշրջանում, որին ցույց կտրվի ամենամեծ օգնությունը: Սակայն այն կկրճատվի եւ 85 միլիոն դոլարից կդառնա 68,7 միլիոն:

Ինչ վերաբերում է «Խաղաղություն եւ անվտանգություն» կատեգորիայով հատկացվող գումարին, այն գործնականում մնում է անփոփոխ՝ 21,7 միլիոն դոլար:

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՑՈՒՅՑԻ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Միասնական ազգային շարժման գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին, երկրի բնակչությանը անկախ քաղաքական համակրանքներից եւ քաղաքական կողմնորոշման, կոչ է անում ապրիլի 19-ին դուրս գալ Ռուսթավելու պողոտա եւ հերթական անգամ վավերացնել երկրի բնակչության քաղաքական կամքը: «Անցյալ շաբաթ, Եվրախորհրդարանի մի խումբ պատգամավորներ նամակ են առաքել Վրաստան: Եվրախորհրդարանի տարբեր երկրների եւ խմբակցությունների ներկայացուցիչների կողմից ստորագրած նամակը մեզ համար տագնապալից է: Դա նման առաջին ուղերձն է Վրաստանի պատմության մեջ վերջին տարիների ընթացքում, երբ Եվրախորհրդարանն անհանգստություն է հայտնում Վրաստանի ապագայի հարցում: Այդ պատճառով էլ Ազգային շարժումը կրկին անգամ հասարակայնությանը կոչ է անում անկախ կուսակցական պատկանելությունից, եւ քաղաքական կողմնորոշման, ապրիլի 19-ին դուրս գալ Ռուսթավելու պողոտա եւ վավերացնել վրաց ժողովրդի կամքը, որ Վրաստանի զարգացման ուղին անցնում է Եվրոպայով եւ ՆԱՏՕ-ով»,- հայտարարեց Վանո Մերաբիշվիլին:

ԿԱՄԱՎՈՐ ՁԻՆԱԹԱՓՈՒՄ

Ախալքալաքիի շրջանի Արագվա գյուղի բնակիչ Ղազարոս Ու.-ն, ծնված 1964 թվականին, կամավոր կերպով քաղաքի ոստիկանությանն է հանձնել զինանյութեր: ՆԳ նախարարության տվյալներով, դրանց թվում եղել են մեկ հակատանկային նռնակ, մեկ ձեռքի գնդակ, ավտոմատի 10 պահեստատուփ, մոտ 1000 փամփուշտ եւ մեկ պայթուցիկ հրթիռ БМ-22 լիցքով: Քննությունը կատարվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «...ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԿԱՆՁԿԱԾՆԵՆՔ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գործարարների ոչ միայն Հայաստանից ու Վրաստանից, այլեւ հայ գործարարներին ամբողջ աշխարհից»,-նշեց նա:

Վրաստանի վարչապետը հուսով է, որ նման համաժողովը թույլ կտա լուրջ ներդրումներ ներգրավել՝ ինչպես Սամցխե-Ջավախեթիում, այնպես էլ Վրաստանի այլ տարածաշրջաններում:

Բիձինա Իվանիշվիլին խոսեց նաեւ Հայաստանի հետ սահմանի չդեմարկացված տեղամասերի մասին: «Այսօր Թբիլիսի կժամանի Հայաստանի արտաքին գործերի փոխնախարարը, եւ ես ցանկանում եմ անձամբ մասնակցել մեր սահմանի առանձին տեղամասերի քննարկմանը, որոնց շուրջ ես հարցեր ունեմ»,- հավելել է նա:

Իվանիշվիլին ընդգծել է, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ սահմանազատման ու սահմանագծման աշխատանքը ակտիվորեն է ընթանում: «Մենք լավ հարաբերություններ ունենք Հայաստանի նախագահի հետ, օրերս մենք հեռախոսազրույց ենք ունեցել Հայաստանի վարչապետի հետ եւ, կարծում եմ, որ այդ հարցը կլուծվի երկու երկրների շահերի հաշվառմամբ»,- ընդգծեց Վրաստանի վարչապետը:

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՐՑԻՆ ԶԳՈՒՅՇ ՄՈՏԵՑՈՒՄ Է ՊԵՏՔ

Անդրադառնալով Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ Աբախազիայի տարածքով անցնող երկաթուղու վերականգնման հարցին, Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը հայտարարեց, որ այն վերականգնելու քաղաքական կամքն առկա է, բայց մենք զգուշություն ենք դրսեւորում:

«Մեր կողմից քաղաքական կամքն առկա է, բայց շատ հարցեր կան: Դա շատ զգայուն թեմա է՝ հաշվի առնելով մեր բռնազավթած տարածքների պատճառով Ռուսաստանի հետ ստեղծված հարաբերությունները: Այդ հարցը քննարկվում է, եւ պետք է լուծվի այս համատեքստում: Մենք դրան շատ զգուշորեն ենք վերաբերվում...»,-հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքով՝ «այդ հարցի լուծման ընթացքում շտապողականությունը կարող է վնասել Վրաստանին»:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՆ ԿՏՐՎԻ ԱՅՆՔԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՐՔԱՆ ԿԿԱՐՈՂԱՆԱՆ ՎԵՐՑՆԵԼ

Հասարակությունը դեռեւս չի կարողանում տեղերում վերահսկել իշխանություններին, եւ մենք առայժմ չենք կարողանում ապահովել երկրի կառավարումը, տարածաշրջանների մամուլի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպմանը հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին:

Բիձինա Իվանիշվիլին խոստացավ տարածաշրջաններին տալ այնքան իշխանություն եւ տեղերում կառավարման այնքան լծակներ, որքան նրանք կկարողանան վերցնել:

«Մենք արդեն ներկայացրել ենք տարածաշրջանների կառավարման ռազմավարությունը, եւ դրա հիման վրա կմշակվեն օրենսդրական ակտեր»,- ասաց նա:

Վարչապետն ընդգծեց, որ ռազմավարության նպատակը բնակչության կողմից երկրի կառավարումն ապահովելն է: Նա նշեց, որ տարածաշրջաններում կստեղծվեն կառավարման երկմակարդակ մարմիններ՝ տարածաշրջանային ու տեղական, որտեղ կընտրվեն ղեկավարները:

Բացի այդ, Վրաստանի 3500 գյուղերում կստեղծվեն կառավարման տեղական խորհուրդներ, որոնք նույնպես կընտրվեն:

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ տարածաշրջանների զարգացման համար այս տարի պետբյուջեում հատկացվել է 200 միլիոն լարի: Այդ գումարը կտրամադրվի ճանապարհների, կամուրջների շինարարության տարածքային նախագծերին եւ այլ միջոցառումների:

«Դուք կտեսնեք, որ մենք կկառուցենք ավելի լավ եւ որակյալ, քան արվել է անցյալում»,- նշեց վարչապետը: Իվանիշվիլին խոստացավ վարկեր հատկացնել տարածաշրջաններում փոքր եւ միջին ձեռնարկությունների կառուցման համար: Դրանք կլինեն արտոնյալ վարկեր 7 տարի եւ ավելի երկար ժամանակով: Ֆերմերները, ինչպես ասաց նա, կկարողանան առանց տոկոսադրույքի ստանալ մինչեւ 5 հազար լարի գումարով սպառողական վարկ: Նա հաղորդեց, որ այսօրվա դրությամբ արդեն վերականգնված են 110 կիլոմետր մելիորացիոն համակարգեր, որ տարածաշրջաններում արդեն սկսվել են ֆերմերային խորհուրդներ, ուր ընդգրկված են 4-5-ական մասնագետներ, եւ նրանք խորհուրդներ կտան ֆերմերներին ու գյուղացիներին: Նա անդրադարձավ նաեւ ռուսաստանյան շուկայի բացմանը, նշելով, որ 40 ընկերություններ արդեն կարող են ռուսաստանյան շուկային հատկացնել ոգելից խմիչքներ եւ հանքային ջուր: Ինչպես ասաց վարչապետը, մարտի 18-ին Թբիլիսի կժամանի եւս մեկ պատվիրակություն եւ կսկսվեն բանակցություններ՝ վրացական գյուղատնտեսական մթերքների համար ռուսաստանյան շուկան բացելու մասին:

«ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐ ՉՈՒՐԿ ԵՆ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԻՑ»

Վրաստանի խորհրդարանի նախագահը դժգոհ է մեծամասնությունից մի շարք պատգամավորների արհեստավարժությունից: Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին լրագրողների հետ հանդիպմանը հաղորդել է, թե Դավիթ Ուսուփաշվիլին իրեն ասել է, որ մեծամասնությունից չունի երեք արհեստավարժ պատգամավոր, ովքեր իրեն կօգնեին խորհրդարանական աշխատանքում:

«Ուստի նա խստիվ հարց բարձրացրեց, որպեսզի միջակա ընտրություններում «Վրացական երազանք» կոալիցիայից թեկնածուներ չառաջադրենք մարզիկներից, դերասաններից եւ այլն»: Նա ընդգծեց, որ կոալիցիան նախընտրական ժամանակաշրջանում կարողացավ մոբիլիզացնել երկրում հայտնի մարդկանց, եւ նրանք ընտրվեցին խորհրդարանում, սակայն նրանք նվազ են ծանոթ խորհրդարանի աշխատանքին:

Միաժամանակ Իվանիշվիլին նշեց խորհրդարանական ընդդիմությունից մի շարք պատգամավորների բարձր պրոֆեսիոնալիզմը՝ ասելով, որ այդ փորձն ընդհանուր առմամբ պետք է աշխատի հօգուտ պառլամենտարիզմի զարգացմանը Վրաստանում:

Վրաստանի վարչապետը խորհրդարանի մեծամասնական պատգամավորներին կոչ արեց զգույշ լինել իրենց արտահայտություններում:

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է, ՈՐ «ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ» ԿՊԱՀՏՊԱՆԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին համարում է, որ երկրի նախկին կառավարող կուսակցությունը՝ «Միասնական ազգային շարժումը», որն այժմ ներկայացնում է խորհրդարանական փոքրամասնությունը, «չի համարձակվի» չպաշտպանել Սահմանադրությունում կատարվելիք ուղղումները, որոնք վերաբերում են նախագահի լիազորություններին:

«Մեծ է հավանականությունը, որ քվեների քանակը կգերազանցի նվազագույն միհիմումը սահմանադրական փոփոխությունների համար, բայց, եթե ասենք, որ նրանք («Ազգային շարժումը») չեն պաշտպանի փոփոխությունները, ապա այդ Սահմանադրության պահպանումը կլինի աղետ նրանց համար: Նրանց չի պաշտպանի ոչ մի եվրոպական կուսակցություն, եւ դրանով նրանք կոչնչացնեն իրենց... Դա կլինի նրանց քաղաքական պարտությունը... Թեեւ Սաակաշվիլին ինձ մեղադրում է, որ ես ցանկանում եմ ոչնչացնել այդ կուսակցությունը, սակայն դա այդպես չէ»,- հայտարարեց Իվանիշվիլին՝ մարտի 14-ին հանդիպում ունենալով տարածաշրջանային ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ:

ԱՐՁԱԳԱՆՔ

ՌՈՒՍԼԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ. «ՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ Է ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆԸ»

Մարտի 14-ին Վրաստանի տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմանը Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին՝ պատասխանելով Սամցխե-Ջավախեթիի, ինչպես նաեւ վրաց-հայկական հարաբերությունների վերաբերյալ հարցին, նշեց, որ ինքը նախօրյակին այդ հարցերը քննարկել է «Վրացական երազանքից» Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանի հետ հանդիպմանը:

Մենք կապվեցին Ռուսլան Պողոսյանի հետ եւ խնդրեցինք հակիճ պատմել վարչապետի հետ տեղի ունեցած հանդիպման եւ դրա ընթացքում արծարծված հարցերի մասին:

- Հանդիպումը կայացավ մարտի 13-ին: Վարչապետն առանձնահատուկ է վերաբերվում վիրահայության եւ առանձնապես Սամցխե--Ջավախեթիի հայ բնակչության ինտեգրման արդյունավետության բարձրացման հարցին: Վարչապետի խոսքերով, հարկ է ակտիվացնել ինտեգրման մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացումը, մշակել նոր նախագծեր, որոնք նպատակամղված կլինեն տարածաշրջանում պետական լեզվի ուսուցման, Վրաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական կյանքում տեղի բնակիչների ներգրավման մակարդակի բարձրացմանը:

Բիձինա Իվանիշվիլին հատկապես ընդգծեց տարածաշրջանների, մասնավորապես՝ Սամցխե-Ջավախեթիի զարգացման գործում ներդրումների ներգրավման հարցի հրատապությունը: Նա խոսեց Թբիլիսիում վրաց-հայկական գործարար համաժողովի անցկացման իր մտադրության մասին, որին Վրաստանի եւ Հայաստանի գործարարներից բացի, կմասնակցեն նաեւ աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ գործարարները: Ըստ վարչապետի՝ ներդրումները հիմնականում պետք է ուղղվեն գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը: Ճիշտ է, Սամցխե-Ջավախեթիի համար գերակա համարվող այս ոլորտի զարգացման համար, պետական մակարդակով լուրջ միջոցառումներ են նախատեսված, բայցեւայնպես, վարչապետ Բիձինա Իվանիշվիլին ոլորտի արդյունավետ զարգացման համար ներդրումների գրավումը առաջնահերթային խնդիր է համարում,- հեռախոսազրույցում ասաց Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ «Չհռչակագրված հարկային պարտավորությունների եւ գույքի համաներման եւ օրինականացման մասին» օրինանախագծի քննարկմանը:

Երկրում տնտեսական համաներում անցկացնելու նախաձեռնությամբ հանդես էր եկել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:

Օրինանախագծի համաձայն, քրեական պատասխանատվությունից եւ հետապնդումից ազատվում են այն անձինք, ովքեր տնտեսական հանցագործություններ են կատարել մինչեւ 2013 թվականի հունվարն ընկած ժամանակահատվածում: Ընդսմին, համաներման ենթարկած անձանցից դատվածությունը հանվելու է: Օրինանախագծում խոսքը վերաբերում էր Վրաստանի քրեական օրենսգրքի 29 հոդվածների մասին:

Մասնավորապես, համաներումը առնչվում էր առանց թույլատագրերի գործունեություն ծավալած անձանց (Վրաստանի քրեական օրենսգրքի 182-2 հոդված), անօրինական գործարարությանը (192), կրթական անօրինական գործունեությանը (192-1), կեղծ գործարարությանը (193), փողերի մաքրմանը (194), փողերի մաքրման ուղիով ստացված գույքի ձեռքբերման, իրացման, տնօրինության համար (194-1), պետական գնումների կանոնների խախտման համար (195-1):

Բացի այդ, ծրագրվում էր համաներում այն անձանց համար, ովքեր արդեն դատվել կամ հետաքննության փուլում են գտնվում Վրաստանի քրեական օրենսգրքի այն հոդվածներով, որոնք նախատեսում են պատժամիջոցներ ապրանքանշանի կամ կոմերցիոն նշանակության այլ մատնանշումների անօրինական օգտագործման (196), կեղծ ապրանքների անօրինական տեղափոխման եւ իրացման (197), էկոմարկաների անօրինական օգտագործման (199), չդրոշմված ապրանքների եւ արտադրանքի ձեռքբերման արտադրության պահեստավորման, տեղափոխման եւ իրացման (200), ակցիզային քարտերի ապօրինի պատրաստման (200-1), այդ քարտերի ապօրինի օգտագործման (200-2), առանց ապրանքանիշի ապօրինի գործարարությամբ արտադրած արտադրանքի տեղափոխման եւ իրացման (200-3) համար: Բացի այդ, տնտեսական համաներումը առնչվելու է այն անձանց, ովքեր մեղադրվում են Վրաստանի քրեական օրենսգրքի այն հոդվածներով, որոնք նախատեսում են պատժամիջոցներ կանխամտածված կեղծ գովազդման (201), հաշվապահական հաշվարկի կանոնների խախտման (204-1), գործարքների միջոցով գույքի թաքցնելու (205-1), հարկային փաստաթղթերի պատրաստման եւ կեղծման (210), վարկային քարտերի կամ չեկի չարաշահման (211), արժեթղթերի շուկայի կանոնների խախտման (213), ազգային տարադրամի օգտագործման կանոնների խախտման (216), արտասահմանից տարադրամով միջոցների չվերադարձման (217), հարկերից խուսափելու (218), սպառողներին խաբելու (219), լիազորությունների չարաշահման (220), անփութության (220-1), կոմերցիոն կաշառքի (221), սահմանակետով ապրանքների տարանցման կանոնների խախտման (214) համար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՏԱՊԱԼԵՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ տապալեց Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլու նախաձեռնությամբ առաջադրված տնտեսական համաներման օրինանախագիծը: Մերժման պատճառներից մեկը հայտարարվեց այն փաստը, որ նախագահն իր օրինանախագիծը չէր համաձայնեցրել կառավարության հետ: «Վրացական երազանքի» պատգամավորները հայտարարեցին նաեւ, որ նախաձեռնության նպատակն էր մարել պարտքերը եւ նաեւ ներել այն գործարարների տնտեսական հանցագործությունները, ովքեր բարեհաճ են տրամադրված նախկին կառավարության նկատմամբ: